ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Վ. Ն. ՂԱԶԱԽԵՑՅԱՆ. Սովետական Հայաստանի գյուղացիության պատմությունը 1920—1929 թթ., *ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1975, 410 էջ։*

Սովետահայ պատմագրությունը զգալի նվաճումներ է ձեռք բերել հանրապետության գյուղացիության պատմությունն ուսումնասիրելու բնագավառում։ Այդ նվաճումներն անհրաժեշտ նախադրյալներ են ստեղծել գյուղացիության պատմությունն իր ամբողջության մեջ ուսումնասիրելու համար։ Ասվածի վկայությունն է գրախոսվող մենագրությունը։ Վ. Ղազախեցյանի դրքում արծարծված հարցերը բազմազան են՝ ագրարային վերափոխումները, նոր տնտեսական քաղաքականությանն անցնելը և նրա կենսագործումը, գյուղի սոցիալ-տնտեսական զարգացումը և գյուղացիության շերտավորումը, դասակարգային պայքարը, պայքարը հանուն լենինյան կոոպերատիվ պլանի կենսագործման՝ գյուղի սոցիալիստական վերակառուցման, աշխատավոր գյուղացիների ներգրավումը հասարակական-քաղաքական գործունեության մեջ, կուլտուրական հեղափոխության առաջին նվաճումները և այլն։

Գրախոսվող մենագրության նախաբանում արժեքավորվում են սովետական պատմագրության նվաճումները գյուղի և գյուղացիության պատմության լուսաբանման բնագավառում։ Ըստ արժանվույն դնահատելով միութենական պատմագրության և առանձին հեղինակների ծառայությունները հետազոտվող պրոբլեմի լուսաբանման գործում, Վ. Ղազախեցյանը, սակայն, չի հիշատակում և, հետևաբար, գրվատանքի ոչ մի խոսք չի ասում այնպիսի գիտնականների հասցեին, որպիսիք են Վ. Դանիլովը և Մ. Կրաբը։

Հեղինակը նշում է, որ գյուղացիության և կոլեկտիվացման պատմության վերաբերյալ գրականության մեջ աչք են դրել մի շարք սխալներ ու թերություններ, քիչ ուշադրություն է դարձվել ագրարային-գյուղացիական հարցի մարքսիստական-լենինյան տեսությանը։ Ուսումնասիրողների ուշադրությունից վրիպել կամ նվազ ուշադրություն է նվիրվել այնպիսի հարցերի, որպիսիք են՝ նեպ-ի կենսագործումը Հայաստանում, սովետահայ գյուղի սոցիալ-դասակարգային շերտավորումը, գյուղի հասարակական-քաղաքական կյանքը և այլն։ Իհարկե, ամենամեծ բացերից մեկն այն է, որ գյուղացիության պատմության պրոբլեմը, ամբողջությամբ վերցրած, չի բարձրացվել և չի ուսումնասիրվել։ Այդ բացի վերացման առումով Վ. Ղազախեցյանի մենագրությունը Սովետական Հայաստանի գյուղացիության 1920-ական թվականների պատմությունը բազմակողմանիորեն ուսումնասիրելու առաջին լուրջ փորձն է։

Հարուստ նյութեր ժողովելով պարբերական մամուլից, գրականությունից և արխիվային վաստաթղթերից, օգտագործելով Սովետական Հայաստանի կառավարության և առանձին ժողկոմատների հաշվետվությունները, հանրապետության և Հայաստանի կոմունիստական կուսակցության ղեկավար գործիչների հոդվածները, ելույթներն ու ճառերը, ուսումնասիրելով ագրարային-գյուղացիական հարցի վերաբերյալ լենինյան տեսական մեծ ժառանգությունը, հեղինակը ստեղծել է ուշագրավ հետազոտություն։

Գյուղացիության պատմության ուսումնասիրության գլխավոր աղբյուրներից մեկը նրա մասին եղած վիճակագրությունն է։ 1920-ական թվականների Սովետական Հայաստանի գյուղացիության և գյուղացիական տնտեսությունների ու նրանց հետ առնչվող մի շարք երևույթների ու հարցերի վերաբերյալ եղած վիճակագրական տվյալները միշտ չէ, որ ամբողջական ու ստույգ, ինչպես նաև գիտականորեն հիմնավորված են։ Դա, անշուշտ, լրացուցիչ դժվարություններ ստեղծելով, հեղինակին ստիպել է այդ հարցին նվիրել ավելի մեծ ուշադրություն և ժամանակ։ Այդ են վկայում աշխատության առաջին բաժնի երկրորդ գլխի առաջին, երրորդ գլխի երկրորդ ենթաբաժինները, երկրորդ բաժնի առաջին գլխի երկրորդ ենթաբաժինը և հատկապես երկրորդ գլուխն ամբողջությամբ։ Հեղինակի մշակած և օգտագործած վիճակագրական

նյութերը հնարավորություն են ընձեռել ուսումնասիրելու և լուսաբանելու ագրարային հարաբերությունները, գյուղացիության դասակարգային շերտավորումը, սոցիալ-տնտեսական հարաբերություններով կյանքի կոչված և լենինյան հանճարով հայտնաբերված ու մշակված նոր տնտեսական քաղաքականության կենսագործումը՝ մանր-գյուղացիական, այսինքն՝ մանր ապրանքային տնտեսություն ունեցող Սովետական Հայաստանում։

Վ. Ղազախեցյանը չի բավարարվել փաստական նյութի հաջորդական շարադրությամբ։ Նա ձգտել է այդ նյութից ընտրել ամենահավաստին և ուշադրության արժանին։ Ընդ որում, փաստական նյութը նա օգտագործել է և՛ որպես արգումենտ այս կամ այն միտքն ապացուցելու, և՛ որպես ելակետ՝ եզրակացության համար։ Համադրելով փաստերը, վիճակագրական և այլ կարգի նյութերը, հեղինակը վեր է հանել 1920-ական թվականների սովետահայ գյուղացիության պատմության բազմաթիվ հարցեր, որոնք մինչև այժմ արծարծվել են ընդհանուր ձևով կամ հարևանցիորեն, իսկ երբեմն էլ՝ վրիպել ուսումնասիրողների տեսադաշտից։ Այդ տեսակետից Վ. Ղազախեցյանի մենագրությունն ուշագրավ է ոչ միայն առաջադրված ու լուսաբանված հարցերի բազմակողմանիությամբ, այլև դրանց հետազոտման խորությամբ։

Այսպես, օրինակ, նոր տնտեսական քաղաքականությանը նվիրված երեք ենթաբաժիններում հեղինակը կարողացել է ցույց տալ Նէպ-ի կարևորագույն նշանակությունը սովետահայ գյուղացիության համար։ Աշխատության կենտրոնական հարցերից մեկը ագրարային վերափոխումներն են։ Այս հարցը ևս Վ. Ղազախեցյանը հետևողականորեն է ուսումնասիրել և լուսաբանել։ Եվ, վերջապես, գրախոսվող մենագրության արժանիքներից մեկը պետք է համարել գյուղի սոցիալ-տնտեսական հարաբերությունների և գյուղացիության սոցիալ-դասակարգային կազմի հարցերի հետազոտումն իրենց զարգացման ընթացքում։ Այստեղ հեղինակն իր որոշակի խոսքն է ասում տնտեսական կացութաձևերի, ինչպես նաև գյուղացիության տարբեր սոցիալական շերտերի մասին։

Չնայած մի շարք մասնակի թերություններին (որոշ ենթաբաժինների ձգձգվածություն, կրկնություններ և այլն), Վ. Ղազախեցյանի «Սովետական Հայաստանի գյուղացիության պատմությունը 1920—1929 թթ.» աշխատությունը կարևոր ներդրում է տվյալ ժամանակաշրջանի մեր հանրապետության ամենարազմամարդ դասակարգի պատմության դիտական ուսումնասիրության գործում։

Ս. Ա. ԱԼԼԱՀՎԵՐԴՅԱՆ,
Պատմական գիտությունների թեկնածու։